ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ «ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Կ-867-16.02.2021-ՏՀ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանել երկրորդ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:	Ընդունվել է: Նախագծի վերնագրից հանվել է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» բառերը:	Ընդունվել է
2.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 5-րդ հոդված (Օրենքի 13-րդ հոդվածի 1-	Նախագծի 5-րդ հոդվածով նախատեսված է «Չափումների	Չի ընդունվել	

		ին մասի 7)-րդ կետից հետո լրացվող նոր 8)-րդ կետ)	միասնականության ապահովման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդրական չափագիտության պահանջների տարածման ոլորտների շրջանակը լրացնել նոր՝ ծառայությունների մատուցման ոլորտով: Մինչդեռ, հարկ է նկատել, որ «ծառայությունների մատուցման ոլորտ» եզրույթը շատ լայն է եւ միանշանակ չի ընկալվում. իրավական որոշակիության սկզբունքը հիմք ընդունելով՝ առաջարկվում է հստակեցնել լրացվող դրույթը, թե կոնկրետ որ ոլորտի, կամ որ ծառայությունների վրա են տարածվում օրենսդրական չափագիտության պահանջները:		
3.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 6-րդ հոդված (Օրենքի 18-րդ հոդվածի նոր լրացվող 1-ին	Նախագծի 2-րդ հոդվածով սահմանվում է նոր՝ «Չափագիտական	Ընդունվել է	Ընդունվել է

		մաս), Նախագծի 8-րդ հոդված (Օրենքի 21-րդ հոդված) և Նախագծի 9-րդ հոդված (Օրենքի 22-րդ հոդված),	վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին» հասկացությունը, որի բովանդակությունից բխում է, որ նշված հասկացությունն Օրենքում այսուհետ կիրառվելու է կրճատ տարբերակով՝ որպես տեսչական մարմին, մինչդեռ Նախագծի 6-րդ եւ 8-րդ հոդվածներում տեսչական մարմնին հղում կատարելիս կիրառվում են այլ հասկացություններ: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկում ենք Նախագծում եւ Օրենքում կիրառել նույնական հասկացությունները՝ առաջին անգամ ամբողջական տարբերակով		

			նշելուց հետո կիրառելով կրճատ տարբերակը: Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված տեսչական մարմնի հասկացության ներմուծման արդյունքում անհրաժեշտություն է առաջանում Օրենքի 22-րդ հոդվածի վերնագրում եւ հոդվածում «վերահսկողություն իրականացնող մարմին» եզրույթն իր հոլովաձեւերով եւս փոխարինել «տեսչական մարմին» եզրույթով՝ համապատասխան հոլովաձեւերով:		
4.	***<< կառավարություն***	Նախագծի 6-րդ հոդվածով	Նախագծի 6-րդ հոդվածով	Ընդունվել է: «Վերադաս մաքսային մարմին»	Ընդունվել է

		նախատեսված «վերադաս մաքսային մարմին» հասկացության:	նախատեսվում է վերադաս մաքսային մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների (...) վերաբերյալ տեղեկատվության տրամադրում չափագիտության ազգային մարմնին եւ տեսչական մարմնին: Նման ձեւակերպումից հասկանալի չէ՝ ում վրա է դրված համապատասխան տեղեկատվությունը չափագիտության ազգային մարմնին եւ տեսչական մարմնին ուղարկելու պարտականությունը. մասնավորապես՝	բառերը փոխարինվել են «Պետական եկամուտների կոմիտե» բառերով:	

			հասկանալի չէ վերադաս մաքսային մարմինը մաքսային մարմնի ղեկավարն է, թե? ստորաբաժանումների ղեկավարը, թե այլ:		
5.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 6-րդ հոդված (Օրենքի 18-րդ հոդվածի նոր լրացվող 1-ին մաս)	Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսված փոփոխությամբ հղում է կատարվում Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասին, որով սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկը, որոնց համաձայն մաքսային մարմնի կողմից տեղեկատվություն է տրամադրվելու տեսչական	Ընդունվել է	Ընդունվել է

			մարմնին, մինչդեռ հարկ է նկատել, որ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը վերաբերում է միայն չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ցանկին, առնվազն որոնց հիման վրա կարող է տեղեկատվություն տրամադրել, ուստի դրույթի հստակությունն ապահովելու նպատակով՝ առաջարկում ենք «մասի համաձայն՝» բառերը փոխարինել «մասով սահմանված ցանկի հիման վրա» բառերով:		
6.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 8-րդ հոդված (Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մաս)	Նախագծի 8-րդ հոդվածով խմբագրվող Օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասում օգտագործվում է «չափագիտության ազգային	Ընդունվել է	Ընդունվել է

			մարմին» եզրույթը, իսկ Օրենքում այն օգտագործվում է միայն «Չափագիտության ազգային մարմին» տեսքով՝ մեծատառով, հետեւաբար, առաջարկվում է Նախագծի 8-րդ հոդվածում «չափագիտության» բառը փոխարինել «Չափագիտության» բառով: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկում ենք Նախագծում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառել միեւնույն հասկացությունները՝ նույն տեսքով:		

7.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մաս (Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մաս)	Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված փոփոխության արդյունքում Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասում կիրառվում է «չափագիտական վերահսկողություն իրականացնող մարմին» եզրույթը, մինչդեռ Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված լրացմամբ, որպես Օրենքում կիրառվող հասկացություն, նշված է «տեսչական մարմին» եզրույթը, հետեւաբար առաջարկում ենք Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասը խմբագրել եւ Օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասում «չափագիտական վերահսկողություն իրականացնող» բառերը փոխարինել «տեսչական»	Ընդունվել է	Ընդունվել է

			բառով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:		
8.	*ՀՀ կառավարություն*	Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մաս (Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փոփոխությամբ նախատեսվում է տեսչական մարմնի ղեկավարի կամ տեսուչի կողմից կարգադրագիր ընդունելու իրավասություն, մինչդեռ, նշենք, որ «Տեսչական մարմիններ մասին» օրենքով «տեսուչ» հասկացություն չի կիառվում, իսկ նույն օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 6-րդ կետով կարգադրագրեր ընդունելու իրավասություն վերապահված է միայն	**Մասամբ է ընդունվել** «Տեսուչ» բառը փոխարինվել է «ծառայող» բառով: Ինչ վերաբերում է կարգադրագիր ընդունելու իրավասությանը, ապա հայտնում ենք, որ «Տեսչական մարմիններ մասին» օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված են միայն տեսչական մարմնի ղեկավարի պարտականությունները, հետևաբար «Տեսչական մարմինների մասին» օրենքում տեսչական մարմնի ծառայողների կողմից կարգադրագիր	**Մասամբ է ընդունվել**

			տեսչական մարմնի ղեկավարին: Հետեւաբար, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» օրենքի կարգավորումները եւ Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված փոփոխությունները, կածում ենք, անհրաժեշտ է «Տեսչական մարմիններ մասին» օրենքում եւս լրացնել տեսչական մարմնի ծառայողների կողմից կարգադրագրել ընդունելու իրավասությունը:	ընդունելու իրավասության վերաբերյալ դրույթի սահմանման անհրաժեշտությունը բացակայում է (այն կարգավորվում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով):	
9.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 11-րդ	Նախագծի 6-րդ հոդվածով	Ընդունվել է	Ընդունվել է

		հոդված	նախատեսվում է Կառավարության կողմից օրենսդրական չափագիտական հսկողության ենթակա չափման միջոցների ներմուծման, ներմուծող կազմակերպության, չափման միջոցի ծագման եւ արտահանման երկրի վերաբերյալ տեղեկատվությունը վերադաս մաքսային մարմնի կողմից չափագիտության ազգային մարմնին եւ վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին տրամադրելու կարգի վերաբերյալ դրույթ, ուստի, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասը, առաջարկում ենք Նախագծի անցումային դրույթներում սահմանել նաեւ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը:		